ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն ստորև ներկայացնում է իր կարիքների համար Տավուշ-1. ք.Նոյեմբերյան, Բերդավան, Դովեղ, Բարեկամավան, Կոթի, Ոսկեվան, Ոսկեպար, Բաղանիս, Ջուջևան համայնքներ (9) միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման, Տավուշ-5. Դեբեդավան, Բագրատաշեն, Դեղձավան, Պտղավան, Զորական, Հաղթանակ, ք.Այրում, Լճկածոր, Արճիս, Կողբ համայնքներ (10) միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքների կատարման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի մայիսի 24-ին կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/1-1 պայմանագրում 2017 թվականի օգոստոսի 14-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1-	Պայմանագրի առարկա հանդիսացող նախագծային աշխատանքների կատարման ժամկետի փոփոխություն:
Փոփոխության նկարագրություն -	ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/1-1 ծածկագրով պայմանագրի N 1 Հավելվածի Չափաբաժին 1-ի և Չափաբաժին 5-ի <<Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը>> սյունակներում կատարվել են հետևյալ փոփոխությունները. <<օգոստոսի 15>> բառերը փոխարինվել են <<սեպտեմբերի 14>> բառերով, <<սեպտեմբերի 25>> բառերը փոխարինվել են <<հոկտեմբերի 25>> բառերով, <<հոկտեմբերի 17>> բառերը փոխարինվել են <<նոյեմբերի 16>> բառերով: <<07.11.2017թ>> բառերը փոխարինվել են <<07.12.2017թ>> բառերով:
Փոփոխության հիմնավորում-	ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/1-1 ծածկագրով պայմանագրի 7.3 կետ:

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

24.05.2017 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/1-1 ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան

14 օգոստոսի 2017թ.

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս.Օհանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով 24.05.2017 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/1-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.3-րդ կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին.

1.1.1 Պայմանագրի N 1 Հավելվածի Չափաբաժին 1-ի և Չափաբաժին 5-ի <<Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը>> սյունակներում կատարել հետևյալ փոփոխությունները.

<<օգոստոսի 15>> բառերը փոխարինել <<սեպտեմբերի 14>> բառերով,

<<սեպտեմբերի 25>> բառերը փոխարինել <<հոկտեմբերի 25>> բառերով,

<<հոկտեմբերի 17>> բառերը փոխարինել <<նոյեմբերի 16>> բառերով:

<<07.11.2017թ>> բառերը փոխարինել <<07.12.2017թ>> բառերով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Կողմերի միջև 24.05.2017 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/1-1 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն ՀՀ 900011012771, ՀՎՀՀ 02565827	<<Երևաննախագիծ>> ՓԲԸ Ք.Երևան, Փ. Բուզանդի 1/3 ՝<<Պրոմեթեյ Բանկ>> ՓԲԸ Հ/Հ 1660000215670100 ՀՎՀՀ 02500241
Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ.	Տնօրեն՝ Ս. Օհանյան (ստորագրություն) Կ.Տ.